



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՅՈՒ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեծլումյանի, քննության առնելով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 20.03.2018 թվականի թիվ 6/9-Ա որոշմամբ կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով՝ մինչև 2020 թվականի մարտի 20-ը պաշտոնավարման ժամկետով:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված ժամկետով՝ ութ անդամի կազմով, ներկայացուցչության հերկյալ համամասնությամբ՝**

1) **փաստաբանների պալատի նախագահը, որն ի պաշտոնե որակավորման հանձնաժողովի նախագահն է, և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված չորս անդամ.**

2) **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.**

3) **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ.**

4) **Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի**

05 մայիսի 2020թ.

թիվ 9/4-Ա

ներկայացմամբ:

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ երկու տարի ժամկետով...**:

Պալատի կանոնադրության 18.4 ենթակետի համաձայն՝ Պալատի նախագահի կողմից որպես որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամներ առաջարկվել է փաստաբաններ **Հունան Տեր-Վարդանյանի (արտոնագիր № 1108), Արսեն Սարգսյանի (արտոնագիր № 1090), Արմինե Ֆանյանի (արտոնագիր № 1262) և Գառնիկ Թուխտարյանի (արտոնագիր № 531)** թեկնածությունները:

(պարբ. փոփոխվել է 13.05.2020թ. թիվ 11/8-Լ, 09.02.2021թ. թիվ 3/7-Ա որոշումներով)

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Պալատը որակավորման հանձնաժողովի անդամների թեկնածությունների առաջարկներ է ստացել համապատասխանաբար ՀՀ արդարադատության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից և ՀՀ վճռաբեկ դատարանից:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 (4), 18.2, 18.4 կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի կողմից առաջադրված փաստաբաններ Հունան Տեր-Վարդանյանին (արտոնագիր № 1108), Արսեն Սարգսյանին (արտոնագիր № 1090), Արմինե Ֆանյանին (արտոնագիր № 1262) և Գառնիկ Թուխտարյանին (արտոնագիր № 531) ընտրել որպես Պալատի որակավորման հանձնաժողովի անդամներ:

(կետը փոփոխվել է 13.05.2020թ. թիվ 11/8-Լ, 09.02.2021թ. թիվ 3/7-Ա որոշումներով)

2. Կազմավորել Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- 1) **Արա Զոհրաբյան՝** ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ (ի պաշտոնե).
- 2) **Հունան Տեր-Վարդանյան՝** ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1108).
(ենթակետը փոփոխվել է 13.05.2020թ. թիվ 11/8-Լ որոշմամբ)
- 3) **Արսեն Սարգսյան՝** ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1090).
- 4) **Արմինե Ֆանյան՝** փաստաբան (արտոնագիր № 1262).
(ենթակետը փոփոխվել է 09.02.2021թ. թիվ 3/7-Ա որոշմամբ)
- 5) **Գառնիկ Թուխտարյան՝** փաստաբան (արտոնագիր № 531).
- 6) **Անահիտ Անտոնյան՝** ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ.
- 7) **Գառնիկ Սաֆարյան՝** ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող.
- 8) **Համլետ Ասատրյան՝** ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

3. Սահմանել, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու փարի ժամկետով և գործում է մինչև 2022 թվականի մայիսի 5-ը ներառյալ:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պալատի որակավորման հանձնաժողովի նորընտիր անդամներին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

05 մայիսի 2020թ.
թիվ 9/4-Ա
ք. Երևան